

Այս թաղին սահմանն է արեւելքէն օղի, արեւմուտքէն գինի, հիւսիսէն քօնեաք, հարաւէն ըօմ. կկարծուի թէ Նոյ նահապետ Քում Քաբուցի էր:

Կառավարութիւնն ոչ սահմանադրական է, ոչ ալ միապետական. անհոգութիւնն է, որ կը վարէ թաղին գործերը:

Նշանաւոր է Մայր Եկեղեցոյ ջրհանկիրներու խումբը, որ կտրիճ երիտասարդներէ կազմուած է եւ մեծ պատիւ վաստակած է իւր ճիւղին մէջ: Եթէ հարուստ ըլլայի՝ ամբողջ թաղ մը կրակի կու տայի՝ այս կտրիճներու վագելը տեսնելու համար:

Քում Քարուն շատ խոնաւ է, բայց Քում Քաբուցին շատ առողջ է: Խոնաւութիւնը միմիայն անոնց լաթերուն վնասած է, եւ եթէ երբեմն Քում Քաբուցի մը տեսնես, որ բորբոսած հագուստով կը վագէ՝ հասկացիր, որ ատոր պատճառն խոնաւութիւնն է:

Մոռցանք յիշելու, որ այս թաղին մէջ հազար երկու հարիւր տուն հայ կայ եւ երկու հազար չորս հարիւր գինետուն, այսինքն տուն գլուխ երկու գինետուն. բայց թաղեցին այս թիւէն գոհ չըլլալով՝ բողոքած է, եւ իւր բողոքն ալ նկատողութեան առնուելով որոշուած է հազար գինետուն եւս աւելցունել:

Գ.

ՔԱՍԸՍ ԲԱՇԱ

Երկաթեայ դիմակ մը պէտք է մարդուս այս թաղը պտըտելու համար: Փողոց մը մտա՞ր, նոյն փողոցին մէջ բնակող կիներն ու աղջիկներն պատուհաններու առջեւ կը վագեն եւ քու գալդ տեսնելով՝ իրարու հետ խօսիլ կը սկսին.

–Տիկի՛ն, սա դիմացէն եկողը կը ճանչնա՞ս:

–Չեմ ճանչնար, բնաւ տեսած չունիմ:

–Այս փողոցին մէջ մէ՞կը կը փնտռէ արդեօք:

–Ո՞վ գիտէ:

–Վայելուչ երիտասարդ մ'է:

–Ի՛նչ աղուոր մագեր ունի:

–Ասոր մագերուն աղուորութիւնն ալ ո՞ր է, սատանայ կնմանի:

–Ապուշ - ապուշ նայուածք մ'ալ ունի...